

Տ Ա. Ճ Կ Ա. Հ Ա. Ց Փ.

Բիւզանդիոնի մէջ կարգում ենք.

Կելիկեոյ Տ. Մկրտիչ կաթողիկոս Քէ ֆուղեանի աղջական-ներէն ոմանք հանդուցեալին գոյքերը սեփականելու համար գատի ձեռնարկած էին: Սակայն, մինչև կաթողիկոսական ընտրութիւն վճռին յետաձգման համար Կայուրական կառավարութեան գիմում ըրած էր թէ ուղղակի և թէ Պատրիարքարանի միջոցաւ Տեղապահ Տ. Կիրակոս Եպիսկոպոսը: Հիմակ որ Կիլիկիոյ Աթոռն իր Ա. Կաթողիկոսն ունի, այս ժառանգներն Հալէպի մէջ դատի սկսած են, բայց Ա. Կաթողիկոսին դիմումներուն վրայ վսեմ: Կուսակալն հրամայած է յետաձգել վճռին գործադրութիւնը, մինչև որ ձեռնհաս մարմնոյն կողմէ սառուցուի, թէ այդ գոյքերն ու դրամը հանդուցեալ կաթողիկոսին անձին, թէ Աթոռին կը վերաբերին:

— Վերջին կէտը աւելի քան դարմանալի է, որովհետեւ անձը Եկեղեցուն նուիրող պաշտօնէի գոյքը կասկած չկայ, որ պատկանում է այդ անձը նուէր ընդունող հիմնարկութեան և ոչ թէ այն աղջականներին, որնցից հրաժարուել է կուսակրօն դարձողը: Բայց կայ մի ուրիշ կէտ, որի վրայ արժէ ուշադրութիւն գարձնել: Յայտնի է, որ ուռուահայ կուսակրօնները սեփականութիւն ունենալու իրաւունք չունին, չեն կարող տիրել կամ ձեռք ըերել անշարժ կայք և ում և է կտակել: Սակայն ոչ ոք չի արգելում և չի էլ կարող արգելել, որ գրամ ունեան, արժէթղթեր դարձնեն և այն և այն: Շատ շատերը, կոռպէկ կոպէկ դրամ հաւաքելով, տալիս են 0/0 ով մասնաւոր անձերին ընտանեքար, իսկ միւսները կամ պահում են որպէս գրամ և կամ որպէս անանուն բանկային տամներ և արժէթղթեր: Կուսակրօնների այդպիսի գոյքը շատ անգամ հէնց իրենց գլխին պատուհաս է դառնում և բաժին մնում ծառաներին ու աւագակներին, կամ կորչում տասնեակ հազարներով այս կամ այն մասնաւոր բանկային հիմնարկութեանց մէջ պահուելուց և սնանկանալուց: Կարծում ենք ժամանակ է պահանջելու, որ յեշեալ օրէնքը փախուի, որ կուսակրօնները՝ իրենց կենդանութեան ժամանակ իրաւունք ունենան անշարժ կալուածներ ձեռք ըերելու և նրանց եկամուտով օդտուելու, իսկ մեռնելուց յետոյ այդ կայքերը կամ պէտք է մնան յօդուտ եկեղեցու և

կամ մի միայն բարենպատակ հաստատութեանց. իսկ աղքա-
կանները կարող են պահանջել մի միայն այն, ինչ որ բերել է
հայրենական տնից կուսակրօն գարձողը: Առիշ խոռովի կու-
սակրօնները ցանկացած դէպքում իրաւունք պէտք է ունենան
օգտուելու նաև հայրենական ժառանգութեամբ իրենց կենդա-
նութեան ժամանակ: Կարծեմ միանգամայն պարզ է այն մեծ
օգուտը, որ այդպիսով պէտք է սահնան թէ եկեղեցիք և թէ
բարենպատակ բոլոր հաստատութիւնները:

Նոյն թերթում կարդում ենք.

Աըսուի թէ Հելենական կառավարութիւնը գետին մը
նուերէր է Աթէնքի մէջ Հայ եկեղեցի մը կառուցանելու համար:
—Աթէնքի մէջ կառուցանելու եկեղեցին համար վէճքար մը
խնդրուած էր Պատրիարքարանէ: Արօն ժողովոյ որոշմամբ օծ-
ուած վէճքար մը զրկու եցաւ Աթէնք:

Ս. Պատրիարք Հայըն պատարագեց ու քարոզեց Պատաթիոյ
Ս. Լուսաւորիչ եկեղեցին մէջ խուռաներամ բազմութեան մը
ներկայութեան: Ն. Սրբազնութիւնը, յաւարտ պատարագի երբ
թափորով Խորհրդարան կ'առաջնորդու էր, Հապէշ պատուիքա-
կութեան անգամ և Մենելիք կայսեր թարգման Մ. Աթօ Մի-
րիեկմ ընկերակցութեամբ Ֆրանսացի թարգմանի մը և Մկրտիչ
էֆ. Պօղոսեանի, Խորհրդարան եկաւ, համբուրեց Ն. Սրբազնու-
թեան Աջը և յանձնեց Մենելիք կայսեր մէկ ինքնագիր նամակը՝
որով Ն. Վ. հառաւութիւնը՝ Հապէշստանի մէջ գտնուող Հայոց
նկատմամբ իր համակըութիւնը կ'յայտնէր և իր բարեները կ'հա-
զորդէր Ս. Պատրիարք Հօր. յանձնեց նաև Զօր. Մաշտշայի մէկ
նամակը, որով շնորհակալութիւն կ'յայտնէր Պօղիս գտնուած
պահուն իրեն հանգէտ Ն. Սրբազնութեան ցոյց տուած մեծա-
քանաց համար: Սիրալիք տեսակցութիւն մ'ունեցան Ս. Պատ-
րիարք Հայըն ու Մ. Աթօ Միրիեկմ, որ սահուն կերպով կ'խօսէր
Ֆրանսերէն: Մ. Աթօ Միրիեկմ աեղեկութիւններ հազօրդեց
Հապէշստան գտնուող Հայոց նկատմամբ, որք պատուարեր
գիրք մ'ունին, ըստու: Յետոյ խոսակցութիւնը գարձաւ Հայ և
Եթովպական եկեղեցիներուն շուրջը, և Ո. Պատրիարք Հայըն
յայտնեց թէ Եթովպական եկեղեցին մօտ է Հայ եկեղեցւոյ, Ս.
Գրիգոր Լուսաւորիչը կ'առնէք գուք, ըստու, և մեք ալ կը տօ-
նենք Ս. Եւստրատէսը: Մ. Աթօ Միրիեկմ հաստատեց Ն. Սրբազ-

նութեան խօսքը, և ըստու թէ Տաթեայ վանդն անոր անուամբ հիմնուած է: Ա. Սրբազնութիւնը գնահատեց Ա. Աթօ Միրիեկմի ունեցած ծանօթութիւնները Հայ և կեղեցւոյ նկատմամբ: Ա. Աթօ Միրիեկմ ըստու թէ մեք առ կ'առնենք Ա. Թագէոս և Յար թողիմէսս առաքեալները: Ա. Միրիեկմ յիշեց, որ Տ. Սահակ և Տիմոթէսս եպիսկոպոսներն այցելած են Հապէշտուան և «Երկամեայ պանդիստութիւն ի Հապէշտուան» անուն գերք մ'ալ հրատարակած են, որ կ'ներկայանայ նոյն ատենուան ժողովարգը, բայց անհետ ի վեր շատ յառաջացած է քաղաքակրթութեան մէջ, հետևաբար սոյն գիրքն առ, բարեփախումներու կ'կարօտի, ըստու: Հապէշ աղգին քաղաքակրթութեան պատմութիւնը գրած եմ և ի Յարիկ ապագասութեան յանձնած եմ, ըստու: Ա. Աթօ Միրիեկմ Ա. Պատրիարք առ վարփառանց վրայ, խոստացաւ օրինակ մը զրկել զրքէն: Տեղեկութիւն ուզեց Տ. Սահակ և Տիմոթէսս եպիսկոպոսներուն վայց: Ա. Պատրիարք Հայրը պատմասիանեց, որ Տ. Տիմոթէսս եպիսկ. ողջ է և Ա. Միրիեկմ վամփաք յայտնեց տեսնել զայն: Ա. Պատրիարք Հայրն ըստու թէ Հապէշտուանի Հայոց հոգեոր հովիւ կարգած է: Տ. Մկրտիչ քահանայ Զղատեանն և թէ մատղիր է ինը ՄԵՆԵՂԻՔ Կայսեր գիրք մ' աւղել, խնդրելով, որ Ամես Ապագայի մէջ մատուռի մը շինութեան համար գետին մը նուիրուի և դիւրութիւններ ընծայուին հոգեոր մատակարարութեան յատուկ պիտացից հայթայթման համար: Ա. Միրիեկմ խոստացաւ այս գործին իրականացման համար իր աշխատութիւնները չղլանալ: Մ. Միրիեկմ արտ հրաւիրուեցաւ Խնամակալութեան կողմէ տրուած սեղանին, ուր շարունակուեցան խօսակցութիւնները, ապա հրաժեշտ առաւ: Ա. Պատրիարքէն, խոստանալով որ օր մը պիտի այցելէ Պատրիարքարան՝ յետոյ առաջնորդութեամբ Տ. Բարգէն և Տիրայր վարդապետներուն և քահանաներուն եկեղեցի իջաւ: Համբուրեց Աւետարանն ու Խաչը: Բացարութիւններ արուեցան իր գանագան հարցումներուն: Աւելիէ վերջ Մ. Միրիեկմ մեկնեցաւ կրկին շնորհակալութիւն յայտնելով երեն հանդէպ ցոյց տրուած սիրալիքը ընդունելութեան համար:

Ա. Պատրիարք Հայրն այսօր փոխազարձ այցելութեան դնաց Հապէշ պատմասիրակութեան: Պատրիարքան եկեղեցին երէցն ներկայ գանուեցան պատարագի արարողութեանց:

Յառաջիկայ կերտելի օր, Խառնիւզի Ա. Ստեփանոս հկես գեցին ածնախմբութեան առթիւ, ուր պիտի պատարացէ Ա. Պատրիարքը, Խաչնդիանդիանդ պիտի կոտարուի Օ. Ներսէսեան նորակառոցց վարժարանին օրջնութիւնն ու բացումը:

Այդ կրթական մագեստի Հաստատութիւնը, որ Քիոցան, Խարիւտած միջնակի մը մէջ կը զանուէր, այլիս վերաշինուեցաւ, — Ենչպէս յայտնի է — հանգուցեալ Թորոս Էֆ. Քարազամեանին և իր եղբայրներուն նուիրատութեամբ, և Գալֆայեան նորակառոցց որբանոցին հետ, որւն մատ կը զանուիր, հանրային ու անհատական բարեգործութեան կարկառուն ու զրական արդիւնքներ են, որոնք իրենց յարկերուն տակ կը պատազարեն հարիւրաւոր մանուկներ, մէծագոյն մասամբ աղքատիկ տղաք ու աղքատիկ աղջիկներ Գալֆայեան Որբանոցին ունուն հիներուն թիւը վաթունը կ'անցնի արդէն, ամենքն ալ զիշերօթիկ և Ենչպէս տեսնուեցաւ անոր բացման հանդէսին օրը, անոնց զատախարակութենէն զատ՝ մեծ հազարութիւն կը նուիրուի անոնց նիստուկացին, հազարամասապատճեն, ոնունդին առողջութեանը: Ա. Ներսէսեան վարժարանին երկուս ամեներն ալ, որոնք առժամապէս եկեղեցինը վերնատունը կը զանուէլին, երբ Փոխազդրուին նորակառոցց վարժարանը, յուսուլի և որ առաջ պիտի ըլլան կրթական մասնաւոր ինստիտուտուն:

Գալֆայեան Որբանոցին վերաշինութեան զործը դառն Խանուեցաւ Համբերատար աշխատութեամբ ու հանրային բարեգործութեան զիմումներով: Ամբողջական զումարներ նուիրուեցան մասնակի ու մաքր նորասաներուն հետ, և վերջապէս շնչը բարձրացաւ լմնցաւ: Խոկ Ա. Ներսէսեան վարժարանի վերաշինութեան լուրը անակնկալ մը եղաւ զրեթէ, երբ օր մը ձանաւցուեցաւ թէ Բարազամեան Տեառը՝ իրենց երէց եղբօր, Թորոս Էֆ. Ենախաձեւութեամբ կը ստանձնին այդ շինութեան բավանդակ ծախըր, կօթաւէր անձնաւորութեանց առաջորկութեան վրաց: Եւ այն ալ հասուցուեցաւ, լմնցաւ:

Իր զանդինը հազոր զում է, որ Կիւիկիոյ Ա. Կաթողիկոսն ստանձնած է կրօնի զատաւանդութիւնը Ժառանդաւորաց վարժարանին մէջ, որ սեպտեմբերին պիտի բացուիր և կանոնաւորառունակելու համար խոստումներ եղած են նիւթապէս օժանգակելու:

Նրաւոտպեմի Ամենասպատիւ. 8. Յարութիւն Պատրիարքը մայիսի 2-ին ճեռագրել է Պատրիարքարան, որ Դեռ կ վարդապետ Մագաուտեան ճանապարհ է ընկել Պոլիս ։

Նզիոլոտոսի գաւառական ժողովը ապրիլ 25-ին նիստ գումարելով առաջնորդ է ընտրել Կուտանայի առաջնորդ Մկրտչ Ճ. վարդապետ Աղաւենունու։

Հալէպից Պոլսոյ թերթերին կը զրեն։

—Վերջերս Հալէպի Եկեղեցւոյն գանձարանին մէջ ցեցիր կեր եղած կարդ մը հին գոյրերն երբ կ'քըքը էին, խախուտ Տին մնդուկի մը խորը 4—5 զորու, թերես աւելի, Հուն թիւն ունեցող 70 կտոր ճեռագիր և նոյնքան ալ ապագիր Եկեղեցական հին գրքեր երեան ելան, որոնց գոյութիւնը միայն Ժամկոչին և հանգուցեալ աւանդապահ Տէր Խոշատուր անուն քահանային միայն յայտնի է եղել Ասում են, որ եթէ Ափիկիոց հանգուցեալ կաթողիկոսին կամ Համայնքներին ծանօթ լինէր, վազուց արագին իւրացրած կիրակին և զրա համար էլ գաղանի թողուածք էր։ Փակուգելի է, որ այդ գրքերը կանոնու որ ցուցակագրուելով, արդիւնքը հրատարակուեր։

Բիւզանզիսի մայիսի 13-ի համարում կարգում ենք։

—Այս առաւոտ, Ազգ. Հիւանզանոցին Հոգաբարձութեան անդամ Յարութիւն էֆ. Առանեան Ա. Պատրիարք Հօր ընակարանն երթալով, մատոյց վերջնական յատակագիծն Հիւանզանոցի նոր թեմին շինութեան համար, 1,200 քառ. մէզրի վրայ 110 ար և կին հիւանզներու յատկացեալ Յատակագիծն յօրինած է հարտարապետ Աւնձեան էֆ., և վաւերացուցած են պետական ճարտարագետք Քերդ էֆ. Առանեան և Սերվիչն էֆ. և Հիւանզանոցի քժիշկները Ա. Պատրիարք Հայրը քննելէ և զոհացուցի զանելէ ետքը, ծանոյց թէ առաջիկայ Դէ. Քաղաքական Ֆողովին պիտի մատուցուի, յետոյ Տնտեսական Խորհուրդին ալ ապահովութիւն պիտի տրուի, թէ շինութեան ծախքն հայթացթուած էլ Արքինետե Համբարձման տօնին առթիւ. Ա. Պատրիարքը շատ զբաղում է ունենաց Հիւանզանոցին մէջ, Հիմնարկելի արարողութիւնը պիտի կատարուի անոր առջե կիրտիկն, կամ Համբարձման նախատօնագին առթիւ, Դէ. օրը։

Հայրենիք Հայության միջնականությունը

Աթովալիսոյ հոգեոր հովիւ Տէր Մկրտիչ քահանայ Զըլդատեանը հասել է Հարար, ուր հայ գաղթականների մի մեծ թիւ երկու ժամուայ ճանապարհ գիմաւորել են Նրան։ Տէր Մկրտիչը Հարար հասնելուց յետոյ իջևանել է Նրանա Մինասեանի ընակաբարձու

Հարաբ համնելուց մի օր յետոց իւր դալստեան մասին տեղեկացրել է փոխարքային։ Նորին վեճմութիւնը փափաք է յայտնել տեսնելու քահանային, ուր շտապել է մի քանի հայրեն ընկերակցութեամբ ներկայանալ նրան իւր ապարանքում։ Ըսդունելութիւնը եզել է շատ սիրալիս։ Հետևեալ ուր փոխարքան իւր քահանայապեամն ու անձնական թարգմանին ու զարկել է փոխադարձ այցելութեան։ Աւագ հինգշաբթի օրը փոխարքայի հրաւիրանոք Մկրտիչ քահանան գնացել է եթովպական եկեղեցին, ուր փոխարքան նստեցրել է իւր աջ կողմը պատշաճ յատուկ աթոռի վրայ, մեծ ուրախութիւն պատճառ ելույթ եթովպացիներին։

Աւագ շաբաթ օրը փոխարքայի պալատի տաջն կատարուել է եկեղեցական հանդէս և Տ. Մկրտիչ թաղմէլ է դարձեալ փոխարքայի աջ կողմը։ Հանդիսի վերջը փոխարքան դափնիկ երկու քարունակ է նուիրել քահանացին և հրաւիրել երեկոյեան ճրագալուցին, որին ներկայ են եզել տէրութեան հիւպատոսները։ Այրիկի 23-ին Մկրտիչ քահանան կրկին այցելել է փոխարքային և զինուորներ ստուալով իւր հետեւրդ, մեկնել է Հարեշտանի ներսը։